ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/117/2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 01 հունիսի 2026թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2026 թվականի հունիսի 1-ին քննության առնելով «Հայաստանի Եվրոպական» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) նախագահ Տիգրան Էդուարդի Խզմալյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/117/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ և 28-րդ կետերով սահմանված Հանձնաժողովի լիազորության շրջանակներում, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների պահպանվածության ստուգման արդյունքում հայտնաբերել է, որ 2024 թվականի ընթացքում Կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվության (այսուհետ՝ նաև Տարեկան հաշվետվություն) մեջ առկա են մի շարք անհամապատասխանություններ:

1.2 2025 թվականի նոյեմբերի 17-ին թիվ 01/4440-2025 գրությամբ Հանձնաժողովը Տիգրան Խզմալյանին հայտնել է Տարեկան հաշվետվության ստուգման արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների մասին և պահանջել է այդ անհամապատասխանությունների վերաբերյալ ներկայացնել պարզաբանումներ և հիմնավորող փաստաթղթեր:

1.3 2025 թվականի փետրվարի 15-ի թիվ Մ-7502-2025 գրությամբ Կուսակցության կողմից ներկայացվել է պարզաբանում (այսուհետ՝ Պարզաբանում), որի համաձայն՝ Տիգրան Խզմալյանի կողմից կամ նրա անունից կատարվել են փոխանցումներ, սակայն նվիրատուների անձնագրային տվյալները հնարավոր չի եղել ամբողջությամբ լրացնել: Հետագայում Հանձնաժողով են ներկայացվել փոխանցումներ իրականացրած անձանց մի մասի անձնագրային տվյալները: Հանձնաժողով են ներկայացվել նաև Տիգրան Գևորգյանի և Արտակ Գրիգորյանի գրությունները, որով վերջիններս տեղեկացրել են, որ իրենց անձնական միջոցներից նվիրատվություններ են կատարել Կուսակցությանը՝ ԵՄ անդամակցության ստորագրահավաքի ֆինանսական ծախսերի մի մասը հոգալու համար, համապատասխանաբար՝ ընդհանուր՝ 400,000 ՀՀ դրամի չափով և 350,000 ՀՀ դրամի չափով:

1.4 Հաշվի առնելով Կուսակցության կողմից ներկայացված տեղեկությունները՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ Պարզաբանմամբ ներկայացված տվյալներով նույնականացվել են փոխանցում կատարած անձանց մի մասի անձնագրային տվյալները, իսկ մնացած՝ ընդհանուր 947,200 (ինը հարյուր քառասունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով նվիրատվությունների վերաբերյալ Հանձնաժողով չեն ներկայացվել Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրության 24-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված տվյալները, ինչպես նաև՝ հիշյալ գումարից 45,000 ՀՀ դրամի չափով փոխանցված անդամավճարների դեպքում չի հիմնավորվել փոխանցում կատարած անձանց՝ Կուսակցության անդամ հանդիսանալու հանգամանքը:

1.5 Հանձնաժողովը Տարեկան հաշվետվության ստուգման տվյալների և Տիգրան Խզմալյանի կողմից ներկայացված պարզաբանումների, հիմնավորող փաստաթղթերի հիման վրա հայտնաբերել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2026 թվականի մայիսի 22-ի թիվ 01/1523-2026 գրությամբ Տիգրան Խզմալյանին՝ հրավիրել է նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ

աշխատանքային օրը՝ ժամը 15:00-ին ներկայանալու Հանձնաժողով, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 16:00-ին գործի քննությանը մասնակցելու նպատակով:

Նշված ծանուցումը Տիգրան Խզմալյանը ստացել է 2026 թվականի մայիսի 22-ին (հիմք՝ էլեկտրոնային հավաստում):

1.6 2026 թվականի մայիսի 27-ին պատշաճ ծանուցված Տիգրան Խզմալյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 120/26 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.7 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Տիգրան Խզմալյանի բացակայությամբ 2026 թվականի հունիսի 1-ին՝ ժամը 16:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթի ընթացքում Տիգրան Խզմալյանի կողմից պարզաբանումներ չեն ներկայացվել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/117/2026 վարչական վարույթում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Տիգրան Խզմալյանը 2019 թվականի նոյեմբերի 13-ից հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը:

3.2 Կուսակցության Տարեկան հաշվետվության՝ «Ծանոթագրություն 1» թերթի «3.2 Անդամավճարներ» աղյուսակի համաձայն՝ Կուսակցությանը 2024 թվականի ընթացքում փոխանցվել է 47,000 ՀՀ դրամի չափով անդամավճար, իսկ Կուսակցության 2024 թվականի բանկային հաշվի քաղվածքով Կուսակցությանը վճարված անդամավճարների ընդհանուր չափը կազմել է 82,000 ՀՀ դրամ, որից 25,000 ՀՀ դրամը փոխանցվել է Հրահատ Մարկոսյանի

կողմից, ինչը ներկայացված է նաև Կուսակցության 2024 թվականի տարեկան հաշվետվությամբ, իսկ 57,000 ՀՀ դրամի չափով անդամավճարներ վճարվել են Կուսակցության 2024 թվականի բանկային հաշվի քաղվածքով նշված այլ անձանց կողմից:

Վերոնշյալ անհամապատասխանության վերաբերյալ Կուսակցության կողմից պարզաբանում չի ներկայացվել, սակայն Տարեկան հաշվետվության մեջ կատարվել են որոշակի շտկումներ, մասնավորապես՝ 57,000 ՀՀ դրամի չափով վճարված անդամավճարներից լրացված են միայն Լուսինե Մարտիրոսյանի անձնագրային տվյալները՝ ընդհանուր 12,000 ՀՀ դրամի չափով նվիրատվության վերաբերյալ: Իսկ 45,000 ՀՀ դրամի չափով կատարված նվիրատվությունների վերաբերյալ նվիրատուների անձնագրային տվյալները Կուսակցության 2024 թվականի տարեկան հաշվետվությամբ առկա չեն: Ուստի, Կուսակցության հաշվին մուտքագրված 45,000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամ գումարը համարվում է անանուն նվիրատվություն, և դրա նկատմամբ կիրառելի են չթույլատրված նվիրատվությունների վերաբերյալ կարգավորումները:

3.3 Կուսակցության 2024 թվականի բանկային հաշվի քաղվածքի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ Կուսակցության բանկային հաշվին մուտքագրված 60,100 ՀՀ դրամի չափով նվիրատվությունները համարվում են անանուն, քանի որ նվիրատուների վերաբերյալ՝ Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրության 24-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված տվյալները Կուսակցության կողմից Հանձնաժողով չեն ներկայացվել:

3.4 Կուսակցության 2024 թվականի բանկային հաշվի քաղվածքի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ Կուսակցության՝ [redacted] հաշվից իրականացվել են փոխանցումներ, և այդ բանկային հաշիվը ներկայացված է որպես Կուսակցության հաշիվ, քանի որ բանկային հաշվի քաղվածքի «գործարքի նկարագրություն» դաշտում՝ որպես ստացող փոխանցող նշված է Կուսակցության անվանումը:

Կուսակցությունը պարզաբանմամբ հայտնել է, որ Կուսակցությունը 2023 թվականին ունեցել է 2 բանկային հաշիվ «[redacted]: Միաժամանակ Հանձնաժողով է ներկայացվել բանկի կողմից տրված տեղեկանք, համաձայն որի՝ Կուսակցությունը «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում ունի վիզա բիզնես քարտ:

Հանձնաժողովը, հաշվի առնելով ներկայացված տեղեկանքն ու պարզաբանումները, արձանագրել է, որ [redacted] բանկային հաշիվը փաստացի պատկանում է Կուսակցությանը: Այդ հիմքով ուսումնասիրվել է նաև տվյալ բանկային հաշվի 2024 թվականի քաղվածքը, որի արդյունքում արձանագրվել է, հետևյալը՝

3.4.1 2024 թվականի բանկային հաշվին որպես նվիրատվություն մուտքագրվել է ընդհանուր՝ 503,000 ՀՀ դրամ, որից 305,000 ՀՀ դրամ փոխանցում կատարած անձինք նույնականացվել են, իսկ Կուսակցության 2024 թվականի բանկային հաշվին որպես նվիրատվություն մուտքագրված ընդհանուր՝ 198,000 ՀՀ դրամ գումարը համարվում է անանուն նվիրատվություն, քանի որ Կուսակցության կողմից Հանձնաժողով չեն ներկայացվել փոխանցում կատարած անձանց անձնագրային տվյալները:

3.4.2 2024 թվականի բանկային հաշվին մուտքագրվել է ընդհանուր՝ 644,100 ՀՀ դրամ գումար, սակայն բանկային հաշվի քաղվածքում արտացոլված չէ, թե այդ գումարը ում կողմից է փոխանցվել, իսկ Կուսակցությունը պարզաբանել է, որ այդ անձանց ինքնությունը իրենց հայտնի չէ: Հետևաբար դրանք ևս համարվում են անանուն նվիրատվություններ և դրանց նկատմամբ կիրառելի են չթույլատրված նվիրատվությունների վերաբերյալ կարգավորումները:

3.5 Այսպիսով, վերոգրյալ արձանագրումներից պարզ է դառնում, որ Կուսակցությունը 2024 թվականի ընթացքում ստացել է ընդհանուր՝ 947,200 (ինը հարյուր քառասունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ չթույլատրված նվիրատվություն:

3.6 Կուսակցության կողմից Հանձնաժողով չի ներկայացվել վերանշյալ գումարները պետական բյուջե փոխանցված լինելը հավաստող ապացույց:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրության 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հաշվետվությունը: Կուսակցությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով պարտավոր է ներկայացնել հաշվետվության

ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային տեղեկատվություն:

4.2 Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրության 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 31-ից ոչ ուշ, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը (այսուհետ՝ տարեկան հաշվետվություն), իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: (...), իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի կուսակցության հաշվում մուտք արված միջոցների աղբյուրների և ծավալի, այդ միջոցների ծախսման, ինչպես նաև ունեցած գույքի մասին՝ նշելով դրա արժեքը:

4.3 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ նվիրատվություններ չեն թույլատրվում՝ անանուն անձանցից:

4.4 Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրության 24-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ **նվիրատվություն կատարող անձինք պարտավոր են նշել իրենց անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի համարը:**

4.5 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը:

4.6 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը:

4.7 Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.10 Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհինգապատիկի չափով:

4.11 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.12 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 189.16-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.13 Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.14 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել հաշվետու տարվա ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հանրային հաշվետվողականությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը: Նշված դրույթի նպատակն է **բոլոր կուսակցությունների համար հավասար հնարավորությունների ապահովումը, ինչպես նաև բոլոր կուսակցությունների ֆինանսական խոցելիության նվազեցման երաշխիքների ապահովումը:**

Նշված դրույթը նպատակ է հետապնդում վերացնել քաղաքական ֆինանսավորման թափանցիկությանն առնչվող այնպիսի ռիսկեր, ինչպիսիք են, օրինակ, անանուն անձանց կողմից կատարված նվիրատվության ներգրավումը: Այս զանցակազմի օբյեկտիվ կողմը

դրսևորվում է բացառապես անգործությամբ, որն արտահայտվում է կուսակցության իրավասու պաշտոնատար անձի կողմից «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով իր վրա անմիջականորեն դրված պարտականությունների չկատարմամբ: Մասնավորապես, ՀՀ օրենսդրությամբ ամրագրված են թույլատրելի նվիրատվությունների առավելագույն չափեր և հստակ արգելքներ՝ նվիրատվությունների որոշակի աղբյուրների նկատմամբ: Թույլատրված աղբյուրներից ստացված, սակայն սահմանված չափերի գերազանցման պարագայում օրենսդիրը նախատեսել է իմպերատիվ պահանջ՝ գումարը վերադարձնել նվիրատուին կամ, օրենքով նախատեսված դեպքերում, փոխանցել պետական բյուջե: Իսկ չթույլատրված աղբյուրներից նվիրատվություններ ստանալու դեպքում սահմանված է պարտադիր պահանջ՝ այդ միջոցները օրենքով սահմանված ժամկետում փոխանցել պետական բյուջե:

Հետևաբար, զանցակազմն առկա է այն ժամանակ, երբ օրենքով նախատեսված ժամկետներում չեն իրականացվում գումարի վերադարձման կամ պետական բյուջե փոխանցման պարտադիր գործողությունները: Ընդ որում, Հանձնաժողովն ընդգծում է, որ սույն զանցակազմն ունի ձևական կառուցվածք, ինչը նշանակում է, որ օբյեկտիվ կողմը համարվում է ավարտված և ամբողջությամբ դրսևորված այն պահից, երբ սպառվում է գումարի վերադարձի կամ պետական բյուջե փոխանցման համար օրենքով հատկացված ժամանակահատվածը, իսկ պահանջվող գործողությունը փաստացի մնում է չկատարված:

Այսպիսով, տվյալ իրավախախտման օբյեկտիվ կողմի պարտադիր տարրերն են իրավական նորմով նախատեսված գործողությունը կատարելու պարտականության առկայությունը, դրա փաստացի չկատարումը (անգործությունը) և օրենքով սահմանված հստակ ժամկետի խախտումը:

Հարկ է ընդգծել, որ Օրենսդրի կողմից նման կարգավորումների՝ սահմանադրական օրենքով ամրագրումն ինքնանպատակ չէ և միտված է կարգավորելու կուսակցությունների մուտքերը՝ կանխելու կուսակցությունների ստվերային ֆինանսավորումները, նպաստելու կուսակցությունների միջև ավելի հավասար պայմանների ապահովմանը, խթանելու ֆինանսական թափանցիկության քաղաքականությանը՝ նպաստելով արդարությանը և նվազեցնելով կոռուպցիայի ռիսկը: Նման կարգավորումների պայմաններում սահմանափակվում են ապօրինի, ստվերային ֆինանսավորումները, ինչը խթանում է քաղաքական

գործընթացներում լայն հասարակության ավելի մեծ ներգրավվածությանը և մասնակցությանը, ինչպես նաև բարձրացնում է քաղաքացիների վստահությունը քաղաքական ուժերի նկատմամբ:

Օրենքով սահմանված չափերը գերազանցող կամ չթույլատրված աղբյուրներից ստացված նվիրատվությունների առնչությամբ կուսակցության պաշտոնատար անձի՝ Սահմանադրական օրենքով նախատեսված պարտականությունների առնչության Հանձնաժողովն ընդգծում է, որ դրանք օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե փոխանցելու կամ նվիրատուին վերադարձնելու իմպերատիվ պահանջն ապահովում է վերոնշյալ սահմանափակումների գործնական կիրառումը: Այս մեխանիզմը կուսակցություններին զրկում է ապօրինի ֆինանսական ռեսուրսներ տնօրինելու հնարավորությունից՝ դրանով իսկ երաշխավորելով քաղաքական համակարգի բարեվարքությունը և քաղաքական ուժերի միջև արդար ու հավասար մրցակցային միջավայրի պահպանումը: Նորմը ծառայում է որպես ֆինանսական վերահսկողության կանխարգելիչ գործիք, որը պաշտպանում է հանրային շահը՝ թույլ չտալով անօրինական կապիտալի ներհոսքը քաղաքական գործընթացներ:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված զանցանքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս է պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Անդրադառնալով Օրենսդրի կողմից նախանշված՝ կուսակցության ֆինանսական հաշվետվողականության ապահովման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության ապահովման նպատակին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն դեպքում հաստատված փաստ է այն, որ ինչպես օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, այնպես էլ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ավարտը Կուսակցության կողմից Կուսակցությանը նվիրատվություն կատարած անձանց տվյալները օրենքով սահմանված

կարգով Հանձնաժողով չի ներկայացվել, ուստի չի ապահովվել Կուսակցության ֆինանսական գործունեության թափանցիկության ու հաշվետվողականության օրենսդրի նպատակը:

Միաժամանակ Տիգրան Խզմալյանի կողմից չեն պահպանվել Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դրույթները, այն է՝ չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դրանք փոխանցել պետական բյուջե:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված տեղեկատվության բացակայության պայմաններում հնարավոր չէ նույնականացնել կուսակցություններին նվիրատվություն իրականացնող անձանց, ինչով պայմանավորված՝ հնարավոր չէ ապահովել ՀՀ Սահմանադրությամբ և Սահմանադրական օրենքով ամրագրված՝ կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների հրապարակման պահանջի ապահովումը, ինչպես նաև տարեկան հաշվետվության ստուգման շրջանակում դրա թույլատրելի լինելու հանգամանքի պարզումը:

Տվյալ դեպքում վարույթի նյութերի ուսումնասիրությամբ հաստատվել է, որ Կուսակցությունը ստացել է անանուն նվիրատվություններ, քանի որ նվիրատուների ինքնությունը չի նույնականացվել Սահմանադրական օրենքով սահմանված կարգով՝ Կուսակցության կողմից նվիրատուների վերաբերյալ պարտադիր ներկայացման ենթակա տվյալները չներկայացնելու պատճառով: Բացի այդ Կուսակցության բանկային հաշիվների քաղվածքների ուսումնասիրությամբ պարզվել է, նաև որ դրանցում ևս արտացոլված չէ, թե այդ գումարները ում կողմից են փոխանցվել:

Իսկ ինչ վերաբերում է Պարզաբանմանը կից ներկայացված Տիգրան Գևորգյանի և Արտակ Գրիգորյանի կողմից համապատասխանաբար՝ ընդհանուր՝ 400,000 ՀՀ դրամի չափով և 350,000 ՀՀ դրամի չափով իրենց անձնական միջոցներից Կուսակցությանը նվիրատվություն կատարելու վերաբերյալ գրություններին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված նվիրատվությունների վերաբերյալ տվյալները բացակայում են Կուսակցության բանկային հաշվի քաղվածքներում, իսկ Կուսակցության կողմից չեն ներկայացվել որևէ այլ հիմնավորող տվյալներ, որոնք կհաստատեն Տիգրան Գևորգյանի և Արտակ Գրիգորյանի կողմից հիշյալ գումարների չափով նվիրատվություններ կատարելը: Հետևապես, հիշյալ գրություններով ներկայացված

տեղեկություններն ինքնին չեն կարող բավարար հիմք հանդիսանալ հաստատելու համար, որ նվիրատվությունները կատարվել են գրություններով նշված անձանց կողմից:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Կուսակցության բանկային հաշվին փոխանցված ***ընդհանուր՝ 947,200 (ինը հարյուր քառասունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով անանուն նվիրատվությունների*** վերաբերյալ, Տիգրան Խզմալյանի ներկայացրած տվյալներում բացակայում են Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրության 24-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված տվյալները, կամ անձը հաստատող փաստաթղթերի համարները:

Ամփոփելով ամբողջ վերոնշյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրության 24-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված տվյալների (անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի համարը) և նվիրատվությունները կոնկրետ անձանց կողմից կատարված լինելու փաստը հավաստող փաստաթղթերի բացակայությամբ, ինչպես նաև՝ հիշյալ նվիրատվությունների գումարը օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուներին չփոխանցելու հանգամանքով պայմանավորված՝ «Հայաստանի Եվրոպական» կուսակցության նախագահ Տիգրան Խզմալյանի կողմից թույլ է տրվել Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված խախտում, այն է՝ կուսակցության կողմից օրենքով չթույլատրված նվիրատվությունները (անանուն նվիրատվությունները) օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չի փոխանցել:

Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝

կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Տիգրան Խզմալյանը 2019 թվականի նոյեմբերի 13-ից հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ նախագահը, ինչով պայմանավորված՝ հանդիսանում է նաև Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով՝ Կուսակցության օգտին կատարված չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում կատարված նվիրատվությունը ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դրանք պետական բյուջե փոխանցելու պարտականություն կրող պաշտոնատար անձ:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Տիգրան Խզմալյանը՝ որպես Օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված կուսակցության պաշտոնատար անձ, ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար:

Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով, ինչպես նաև 24-րդ հոդվածի 6-րդ մասով, Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հայաստանի Եվրոպական» կուսակցության նախագահ Տիգրան Խզմալյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ ***100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տիգրան Խզմալյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Տիգրան Խզմալյանին տրամադրել երեսնօրյա ժամկետ ***947,200 (ինը հարյուր քառասունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամի*** չափով անանուն նվիրատվությունների գումարը պետական բյուջե փոխանցելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ